ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ԵՔ-ԲՄԾՁԲ-18/6» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Խաչատրյանը

Հանձնաժողովի անդամներ՝ Հ. Խաչատրյանը, Տ. Ավինյանը, Ս. Աղեկյանը, Ա. Ոսկանյանը, Ա. Ջանունցը

Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Մուրադյանը

1. Հայտերի բացման մասին

1.1. Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2017 թվականի դեկտեմբերի 11-ին, ժամը 11:00-ին, Երևանի քաղաքապետարան, ք. Երևան Արգիշտի 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 6, դեմ - 0:

1.2 Ընդունել ի գիտություն, որ «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/6» ծածկագրով գնանշման հարցման հրավերին էլեկտրոնային համակարգով /www.armeps.am/ առգիծ հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Հ/Հ	Մասնակցի անվանումը
1	«Յունիգրաֆ-Իքս» ՍՊԸ

2. Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի մասին

ՀՀ դրամ

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Նախահաշվային գին	«Յունիգրաֆ-Իքս» ՍՊԸ		
			Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գին
1	Թափառող կենդանիների վնասազերծման /ստերիլիզացման/	23536600	19301333	3860267	23161600

	ծառայություններ				
2	Թափառող կենդանիների վնասազերծման ծառայություններ	91065600	75888000	15177600	91065600

Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկներում չկան թվաբանական անճշտություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 2՝ Ս. Աղեկյան, Տ. Ավինյան

3. Տվյալներ բացված հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

3.1. Մասնակցի կողմից ներկայացված յուրաքանչյուր բացված հայտում պահանջվող փաստաթղթերը առկա են.

Ընդունվել է որոշում՝ կողմ - 6, դեմ – 0

3.2 Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան,

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 2՝ Ս. Աղեկյան, Տ. Ավինյան

3.3. Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

Հ/Հ	1-ին տեղ զբաղեցրած մասնակից հայտարարել			2-րդ տեղ զբաղեցրած մասնակից	3-րդ տեղ զբաղեցրած մասնակից
	Մասնակցի անուն	Պայմ. գին	ԱԱՀ		
1	«Յունիգրաֆ-Իքս» ՍՊԸ	23161600	+	----------	----------
2	«Յունիգրաֆ-Իքս» ՍՊԸ	91065600	+	----------	----------

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 2՝ Ս. Աղեկյան, Տ. Ավինյան

Ընդունել ի գիտություն, որ գնահատող հանձնաժողովի անդամ Ս. Աղեկյանը ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով՝ հայտերի բացման վերաբերյալ գրավոր ձևով ներկայացրել է հատուկ կարծիք, որը կցվում է սույն արձանագրությանը և օրենքով սահմանված կարգով հրապարակվելու է ՀՀ ֆինանսների նախարարության (gnumner.am) պաշտոնական կայքում:

3.4 Գնահատող հանձնաժողովը որոշեց armeps համակարգով վերջացնել գնահատումը, որից գնահատման հաշվետվության բեռնումից հետո (Evaluation) առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների մասով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 2՝ Ս. Աղեկյան, Տ. Ավինյան

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.

Հանձնաժողովի		
Նախագահ՝		Կ. Խաչատրյան
Անդամներ՝		Հ. Խաչատրյան
		Տ. Ավինյան
		Ս. Աղեկյան
		Ա. Ոսկանյան
		Ա. Ջանունց
Քարտուղար՝		Գ. Մուրադյան

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Ես՝ Սոննա Սուրենի Աղեկյանս, որպես Գնահատող հանձնաժողովի անդամ, ուսումնասիրելով Բաց մրցույթի՝ ԵՔ-ԲՄԾՁԲ-18/6 ծածկագրով գնման ընթացակարգին ներկայացված միակ մասնակից համարվող «Յունիգրաֆ-Իքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը, գտնում եմ, որ ներկայացված ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ-ում ներկայացված Արժեքը՝ ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը իրական և իրատեսական չէ:

2017 թվականի նոյեմբերին Երևանում կատարված Worldwide Veterinary Services կազմակերպության տվյալների համաձայն՝ Երևան համայնքում առկա թափառող շների քանակը չի գերազանցում 3609-ից:

Ուսումնասիրելով նախորդ տարիներին «Յունիգրաֆ-Իքս» ՍՊԸ-ի կողմից կատարված շների քնեցման և ստերջացման գործընթացը, հստակ երևում է, որ սույն ընկերությունը շների քնեցումը կատարում է բավական դաժանաբար՝ ծանր մահակներով կոտրելով կենդանիների գլուխը կամ ուղղակի ներարկում է լիդոկային, որը առաջացնում է բառիս բուն իմաստով տանջամահություն կենդանիների մոտ:

Ստերջացման գործընթացն ուսումնասիրելով, արձանագրվել է, որ Շահառուի կողմից ներկայացված ոչ բոլոր պահանջներն են պահպանվել՝ (տես՝ https://www.youtube.com/watch?v=Hsy117PQ-Uc և https://www.youtube.com/watch?v=SFM8uPf7cOQ հղումները):

Հաշվի առնելով վերոգրյալը, հստակ է, ներկայացված ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ-ը ենթակա չէ հաստատման:

Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ

Գնահատող հանձնաժողովի անդամ՝ Ս. Աղեկյան